ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք, ՀՀ Արմավիրի մարզ, գ.Դաշտ, Մաշտոցի 34, հեռ. (094) 404402 , dasht.armavir@mta.gov.am

N 137
27 նոյեմբեր 2018թ.

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ

Կից Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի 20.11.2018թ-ի կայացած ավագանու թիվ 04 հերթական նիստում ընդունված որոշումները:

Կից էլ.նյութ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Կատ. Առաջատար մասնագետ-համակարգչային օպերատոր՝ Թ.Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թ. թվականի N 22

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՆՔԻ 20.11.2018թ.ԱԿԱՆԻ ԹԻՎ 04 ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Օրակարգի հաստատում:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի 2018թ. թվականի բյուջեի հաստատման մասին 2017թ. թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 43-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ղեկավարի հաղորդումը համայնքի ավագանուն 2018թ. թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին:
4. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի վարչական տարածքում 2019թ. թվականի համար տեղական տուրքերի և վարձավճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
5. Արմավիրի մարզի Դաշտ համայնքի բնակիչ հանդիսացող ուսանողներին ֆինանսական օգնություն ցուցաբերելու մասին:
6. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն տրամադրելու մասին:
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արձանագրության քննարկման մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 23-Ն

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 43-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով,83-րդ հոդվածի 2-րդ մասով, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով,3-րդ մասով և հիմք ընդունելով Դաշտ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Արմավիրի մարզի Դաշտ համայնքի 2017թվականի դեկտեմբերի 12-ի <<Դաշտ համայնքի ավագանու 2018թվականի բյուջեի հաստատման մասին>> թիվ 43-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1)որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին տողի 3-րդ սյունակի <<2 968 100>> թիվը փոխարինել <<2 634 200>> թվով,
2)որոշման հավելվածի 1-ին կետի 2-րդ տողի 3-րդ սյունակի <<153 400>> թիվը փոխարինել <<133 400>> թվով,
3)որոշման հավելվածի 1-րդ կետի 3-րդ տողի 3-րդ սյունակի <<1 780 500>> թիվը փոխարինել <<1 698 300> թվով,
4)որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ տողի 3-րդ սյունակի <<739 412>> թիվը փոխարինել <<2 004 510>> թվով,
5)որոշման հավելվածի 1-ին կետի 1-ին տողի 3-րդ սյունակի <<780 000>> թիվը փոխարինել <<390 000>> թվով,
6)որոշման հավելվածի 1-ին կետում ավելացնել նոր 12-րդ տող,<<Այլ հիմնական միջոցների օտարում>>,3-րդ սյունակում գրելով՝ <<317 506>>թիվը,
7)որոշման հավելվածի 2-րդ կետի 1-ին տողի 3-րդ սյունակի <<15 134 000>>թիվը փոխարինել <<15 046 000>>թվով,
8)որոշման հավելվածի 2-րդ կետի 2-րդ տողի 3-րդ սյունակի <<370 000>>թիվը փոխարինել <<671 900>> թվով,
9)որոշման հավելվածի 2-րդ կետի 5-րդ տողի 3-րդ սյունակի <<5 553 100>>թիվը փոխարինել <<4 525 100>> թվով,
10)որոշման հավելվածի 2-րդ կետի 7-րդ տողի 3-րդ սյունակի <<1 000 000>>թիվը փոխարինել <<1 350 000>> թվով,
11)որոշման հավելվածի 2-րդ կետի 8-րդ տողի 3-րդ սյունակի <<397 600>>թիվը փոխարինել <<35 600>> թվով,
12)որոշման հավելվածի 3-րդ կետի 4-րդ տողի 3-րդ սյունակի <<174 000>>թիվը փոխարինել <<186 000>> թվով,
13)որոշման հավելվածի 3-րդ կետի 5-րդ տողի 3-րդ սյունակի <<100 000>>թիվը փոխարինել <<0>> թվով,
14)որոշման հավելվածի 3-րդ կետի 15-րդ տողի 3-րդ սյունակի <<397 600>>թիվը փոխարինել <<35 600>> թվով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 24

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 9-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ի գիտություն ընդունել Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ղեկավարի հաղորդումը՝ համայնքի 2018թվականի բյուջեի 3-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Առաջարկել համայնքի ղեկավարին ձեռնարկել միջոցներ իր լիազորությունների շրջանակում բյուջեի կատարումն ապահովելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ
2018ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 3-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ

	Եկամուտներ	*Տարեկան պլան հազ.դր.*	*3-րդ եռամսյակ/ հազ.դրամ/*	*Փաստացի հազ.դր.*	*Կատարողական%*
1	Հողի հարկ	2968.1	1980..0	939.8	47.4
2	Գույքահարկ	1933.9	1450.5	852.6	58.8
3	Տեղական տուրք	242..0	181.5	149.5	82.3
4	Վարձակալական հ/հ	172.2	129.1	35.2	27.2
5	Տեղական վճար	810..0	542.5	0	0
6	*Ընդ.սեփական եկամուտ*	*6126.2*	*4283.6*	*1977.1*	*46.1*
7	Պետ.բյուջեից դոտացիա	17165.4	12874..0	12874.1	75
8	Այլ մուտքեր	0	0	42.7	0
9	Ընդ.վարչ.բյուջեի եկամուտներ	23291.6	17157.6	14893.9	86.8
10	Հողի օտարումից եկամուտներ	739.4	739.4	1254.2	169.6
11	Տարեսկզբի ազատ մն.	603.7	603.7	603.7	
	Ընդամենը եկամուտներ	**24634.7**	**18500.7**	**16751.8**	**90.5**
	Ծախսեր	*Տարեկան պլան հազ.դր.*	*3-րդ եռամսյակ/ հազ.դրամ/*	*Փաստացի հազ.դր.*	*Կատարողական%*
1	Աշխատավարձ հ/ի աշխատողների	13640..0	10300..0	9247.1	89.8
2	Աշխատավարձ մշակույթի տան աշխ.	3970..0	2530..0	2042.7	80.7
3	Էլեկտրաէներգիա	600..0	500..0	292.2	58.4
4	Կապի ծառայություն	174..0	138..0	138..0	100
5	Տեղեկատվական ծառայություն	140..0	120..0	68..0	56.7
6	Մեք. և սարք. ընթ.նորոգում	80..0	80..0	59..0	73.7
7	Համակարգչային ծառայություն	120..0	100..0	58.8	58.8
8	Աղբահանություն	780..0	585..0	520..0	88.9
9	Երիտասարդական ծրագրեր	1000..0	750..0	750..0	100
10	Ներքին գործուղումներ	100..0	100..0	0	0
11	Ներկայացուցչական ծախսեր	220..0	180..0	100..0	55.5
12	Շենք շինութ.ընթ.նոր.	490..0	440..0	150..0	34.1
13	Գրասենյակային նյութեր	120..0	120..0	0	0
14	Կենցաղային նյութեր	100..0	80..0	80..0	100..0
15	Ընդհանուր բնույթի այլ ծախսեր	50..0	50..0	0	0
16	Այլ նպաստներ բյուջեից	1000..0	750..0	650..0	86.6
17	Մասնագիտական ծառայութ.	160..0	160..0	0	0
18	Շենք-շին. կապիտալ վերան.	1343.1	1343.1	0	0
19	Պահուստային ֆոնդ	397.6	0	0	0
20	Գյուղատնտեսություն	150..0	150..0	36.4	24.2
	Ընդամենը վարչակ.բյուջեի ծախսեր	*24634.7*	*18476.1*	*14192.2*	*76.8*

Աշխատակազմի քարտուղար՝ ---------- Հ.Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 25-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ,9-րդ և 10-րդ հոդվածներով,<<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով և 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի բ. ենթակետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի վարչական տարածքի 2019թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

2018ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N25-Ն ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների հիմնական օբյեկտների շինարարության թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող և հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 7500 /յոթ հազար հինգ հարյուր/ դրամ.

2) սույն կետի 1-ին ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

ա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 15000 /տասնհինգ հազար/ դրամ.

բ. 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ.

գ. 1001 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 25000 /քսանհինգ հազար/ դրամ:

2.Ոչ հիմնական շինությունների տեղադրման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝

1) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 1500/ մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.

2) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:

3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 1500/մեկ հազար հինգ հարյուր / դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն որոշման 1-ին կետով սահմանված նորմերը:

4. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2500 /երկու հազար հինգ հարյուր/ դրամ:
5. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանել՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000/երեք հազար/ դրամ.
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար մինչև 26քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 /երեք հազար/ դրամ:
6. Համայնքի տարածքում՝
1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տուրքը սահմանել յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ.
2) հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված և սեղմված գազի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 150 000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ:
7. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներով պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 25.000 /քսան հինգ հազար/ դրամ:
8. Համայնքի տարածքում՝ առևտրի , հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝
1) առևտրի օբյեկտների համար՝ 35 000 /երեսունհինգ հազար / դրամ.
2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000 /հիսուն հազար/ դրամ.
3) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ.
4) խաղատների կազմակերպման համար՝ 500 000 /հինգ հարյուր հազար/ դրամ.
5) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000 /երկու հարյուր հիսուն հազար/ դրամ.
6) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000 /հարյուր հազար/ դրամ:
9. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 /երկու հազար/ դրամ.
2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 /երեք հազար հինգ հարյուր/ դրամ.
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 /մեկ հազար հինգ հարյուր/ դրամ.
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 350 /երեք հարյուր հիսուն/ դրամ:
10. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:
11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 /հինգ հազար /դրամ:
12. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար սահմանել մասնակիցներից վճար 1000 /մեկ հազար/ դրամ:
13. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար մատուցած ծառայությունների դիմաց վճար սահմանել 1000 /մեկ հազար/ դրամ:

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար գյուղապետարանի կողմից մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 3000 /երեք հազար/ դրամ:

15.Աղբահանության վճար սահմանել համայնքում հաշվառված և փաստացի բնակվող,ինչպես նաև չհաշվառված,սակայն համայնքում փաստացի բնակվող յուրաքանչյուր անձի համար ամսական 100դրամ:

Աշխատակազմի քարտուղար՝ ---------- Հ.Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 26

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով նկատի ունենալով Դաշտ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Դաշտ համայնքի բնակիչ հանդիսացող ուսանողների, ովքեր հաճախում են Երևանի ԲՈՒՀ-եր, որպես ֆինանսական աջակցություն, տրամադրել ավտոբուս՝ մասնավոր հատվածից և որպես ուղևորավարձ 2018թվականի սեպտեմբերի ամսից մինչև 2018թվականի ավարտը տրամադրել համայնքի 2018թվականի վարչական բյուջեից 351 900/երեք հարյուր հիսունմեկ հազար ինը հարյուր/ՀՀ դրամ գումար:
2. Ավտոբուսի վարորդի հետ կնքել համապատասխան պայմանագիր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Զեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 27

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 7-րդ կետով և նկատի ունենալով Դաշտ համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Արմավիրի մարզի Դաշտ համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել 300 000/երեք հարյուր հազար/ՀՀ դրամ ընդհանուր գումարով՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Դաշտ համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Դաշտ, (094) 404402, dasht.armavir@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

20 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2018թվականի N 28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴԱՇՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018ԹՎԱԿԱՆԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 96-րդ և 98-րդ հոդվածների պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2018թվականի հուլիսի 31-ի թիվ 260 որոշմամբ Արմավիրի մարզի Դաշտ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման վերաբերյալ նյութերը.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքում իրականացված իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման արձանագրության մեջ տեղ գտած խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկել համապատասխան միջոցներ՝

1/Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին և աշխատակազմին,համայնքի ավագանու նիստերի օրակարգի ձևավորման գործընթացում պահպանել <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջները,

2/Ֆինանսական հնարավորության առկայության դեպքում նախատեսել համայնքի գլխավոր հատակագծի և գոտևորման նախագծի մշակումը,

3/Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին կազմել նոր քաղաքաշինական մատյան՝ ձևաչափին համապատասխան,

.4/Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմին սկսել թաղումների և գերեզմանատեղերի գրանցման մատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրման գործընթացը,<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

5/Առաջիկայում պատվիրել գերեզմանատան հողերի օգտագործման հատակագիծը և տեղադրել ցուցանակ գերեզմանատնից օգտվելու կանոնների վերաբերյալ:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Դաշտ համայնքի ղեկավարին՝ սույն որոշմամբ նախատեսված գործառույթների ավարտից հետո սահմանված կարգով և ժամկետներում համապատասխան տեղեկատվությունն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ՍԱՄՍՈՆ

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՐՇԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱ ՀՐԱՆԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ